ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԻՆԳՕՐԵՔ-ՊԵԿՏԵՄԲԵՐ 2007թ. ԹԻՎ 7 (9)
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ Բ ՏԱՐԻ

ENGINEER

ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 29-ի թիվ 1414-Ն որոշմամբ՝ 2008-2009թթ. ուսումնական տարվանից համալսարանում կավելանա երկու նոր մասնագիտություն.

1. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա:

2. Կառավարման տեղեկատվական համակարգեր:

Գիտխորհրդի որոշմամբ՝ համալսարանի կառուցվածքում ստեղծվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների և արդյունաբերական էլեկտրոնիկայի» ամբիոն: Ամբիոնի վարիչ է նշանակվել հանրաճանաչ գիտնական, Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Սիեր Մարկոսյանը:

➥ 3

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԽՈՍՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ



Հարգարժան բարեկամներ, ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Ավանդաբար կառուցողի բարի համբավ վայելող մեր ժողովրդի համար անկախության ժամանակահատվածը դարձավ արարելու, ապրելու նրա դարավոր ճգտումի ևս մի վառ ապացույց: Դրա վկայությունը քաղաքաշինության ու ճանապարհաշինության բուռն զարգացումն է, որն անհնար է պատկերացնել առանց բարձրակարգ ճարտարապետների ու շինարարների, որոնց պատրաստման գործում իր մեծագույն ավանդն ունի մեր մայր բուհը: Շնորհավորում են նաև,մայր բուհի խոսափողը դարձած «Ինժեներ» թերթի մեկամյա տարեդարձի կապակցությամբ: Լինելով թերթի մշտական ընթերցողը՝ մենք ականատես եղանք, թե ինչպես կարճ ժամանակահատվածում այն կարողացավ ներկայանալի ու սպասելի դառնալ ոչ միայն բուհի շրջանակներում: Կրկին անգամ շնորհավորում եմ բոլորիդ գալիք տոների առթիվ, մաղթում նորանոր նվաճումներ՝ հանուն մեր երկրի ու ժողովրդի լավագույն ապագայի կերտման:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ



«ԻՆԺԵՆԵՐԻ» ՀԱՂԹԱՐՇԱՎԸ



Երևանի ֆուտզալի 2007-2008թթ. առաջնության երկրորդ տուրից հետո, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ֆուտբոլային «Ինժեներ» թիմը, տանելով երկու հաղթանակ, վստահորեն գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

➥ 8

«ԻՆԺԵՆԵՐԸ» ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ Է



Մեկ տարի է, ինչ լույս է տեսնում համալսարանի «Ինժեներ» ամսաթերթը: Հայաստանում լույս տեսնող հարյուրավոր թերթերի ցանկը համալրած «Ինժեները» առանձնանում է իր խնդիրներով և բովանդակությամբ: Թերթը լուսաբանում է համալսարանի գործունեությունը, գիտխորհրդի, ռեկտորատի որոշումները, փորձում է վեր հանել խնդիրներ՝ հրապարակային քննարկման ակնկալիքով:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ-2007



Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ նոյեմբերի 16-ին «Կենտրոն» թաղապետարանում հուշամեդալներ շնորհվեցին բուհերի լավագույն ուսանողներին:

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանից, որպես տարվա լավագույն ուսանող, հուշամեդալով պարգևատրվեց ՇՏ-33 խմբի ուսանողուհի **Արևիկ Գեղեցյան**:

➥ 2

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Համալսարանի կառավարման խորհրդի 2007թ. դեկտեմբերի 26-ի նիստում լսվել և դրական է գնահատվել ռեկտոր Հ. Թոքմաջյանի աշխատանքի տարեկան հաշվետվությունը: Կառավարման խորհրդի մեկ այլ որոշմամբ՝ հաստատվել է համալսարանի 2008թ. բյուջեն:

ԳԻՏԽՈՐՀՐԴՈՒՄ

2007թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ համալսարանի գիտխորհրդի նիստ, որը վարում էր ռեկտոր Հ. Թոքմաջյանը: Գիտխորհրդի որոշմամբ փոփոխություններ կատարվեցին համալսարանի կառուցվածքում: Գիտխորհրդի մեկ այլ որոշմամբ, 10-18 տոկոսով բարձրացվեցին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերը: Գիտ. թեկնածու, դոցենտի աշխատավարձը սահմանվել է 100 հազ. դրամ:

➥ 2

ՍԿՐՏԻՉ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ



Հայաստանի ճարտարապետների միության անունից շնորհավորում եմ բոլորիդ՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

2007 թվականը նշանավորվեց վերջին տարիների համար աննախադեպ ճարտարապետաշինարարական աշխատանքների ծավալով և եղավ նվաճումների տարի: Երկրի բարգավաճման ճանապարհին առաջին պայմանը կրթված, բարձր մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների առկայությունն է: Այստեղ է, որ կարևորվում է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի դերը՝ աշխարհաճանաչ ճարտարապետներով, կրթական իր մեծ ներուժով: Համալսարանում ստեղծված են ուսումնակրթական հիանալի պայմաններ. բավական մեծ քանակությամբ լսարաններ են վերանորոգվել և տեխնիկապես հագեցվել: Շնորհավորում եմ նաև «Ինժեներ»-ի մեկամյակը: Ամսաթերթը բուհի լրատվամիջոցն է, և տեսնում եմ, որ հետաքրքրվողների շրջանակը գնալով ընդլայնվում է: Հաջողություն եմ ցանկանում թերթի ստեղծագործական անձնակազմին:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ: Թող 2008 թվականը մեր բոլորի համար լինի խաղաղության, ստեղծագործական վերելքի և հաջողությունների տարի:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՄԱՆՈՂ-2007

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ «ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ»

➥ 1

Նույն օրը, կառավարության նիստերի դահլիճում ուսանողները հանդիպում ունեցան ՀՀ վարչապետ **Սերժ Սարգսյանի** հետ: Հանդիպումը տևեց մոտ 2 ժամ: Վարչապետի առաջարկով՝ հարցուպատասխանի փոխարեն կառավարության նիստերի դահլիճում անցկացվեց նիստ՝ երիտասարդ «նախարարների» մասնակցությամբ: «Ուսանողական կառավարության» նիստն անցավ բավական աշխույժ, ներկայացված հարցերի վերաբերյալ հնչեցին բազմաթիվ առաջարկներ, որոնք ՀՀ վարչապետ **Սերժ Սարգսյանի** հանձնարարությամբ արձանագրվեցին և կուղղվեն գործող կառավարության անդամներին:

ԻՆԺԵՆԵՐԸ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ Է

➥ 1

Առանձնահատուկ կարևոր է «Բնագավառի երախտավորները» շարքը, որը հնարավորություն է տալիս ծանոթանալու ճարտարապետության և շինարարության պատմությունը կերտողների կյանքին և գործունեությանը: Այն անհրաժեշտ է ապագա ինժեներին՝ ավելի խորը պատկերացնելու իր կողմից ընտրված մասնագիտությունը:

Ի՞նչ անելիքներ ունի թերթը:

Ամսաթերթը փորձելու է չսահմանափակվել միայն համալսարանական առօրյայի լուսաբանությամբ և ընդգրկելու է ավելի լայն շրջանակ: Ամսաթերթը ցավում է, որ ընդհատվել է «Ստեղծագործում են ուսանողները» շարքը և հորդորում է ուսանողներին ավելի ակտիվ լինել և իրենց ներդրումն ունենալ թերթում:

Այսքանը, կհանդիպենք հաջորդ տարի:

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍՊԱՆԸ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ



Նոյեմբերի 16-ին պաշտոնական այցով Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան այցելեց Հայաստանում Եգիպտոսի արտակարգ և լիազոր դեսպան, պարոն Վահիդ Գալալին: Համալսարանի ղեկավարության հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին Եգիպտոսի հետ համագործակցության հեռանկարները: Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանն իր պատրաստակամությունը հայտնեց համագործակցել Կահիրեի համալսարանի ճարտարապետության և շինարարության դեպարտամենտի հետ, մշակել համագործակցության ծրագրեր ճարտարապետության, շինարարության, ճանապարհային ուղիների, կամուրջների, ջրային համակարգերի, համակարգչային դիզայն-նախագծման և այլ ոլորտներում:

Դեսպան Վահիդ Գալալին շրջայց կատարեց համալսարանում, եղավ ամբիոններում, ուսանողական լսարաններում և իր գոհունակությունը հայտնեց ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած լսարանների վերաբերյալ:

«Ճարտարապետություն և շինարարություն. ժամանակակից հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողով

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում 2008թ. հոկտեմբերի 13-16-ը նախատեսվում է անցկացնել «Ճարտարապետություն և շինարարություն. ժամանակակից հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովը կունենա երեք ուղղություններ.

1. Ճարտարապետություն , քաղաքաշինություն, դիզայն:

2. Շինարարություն, շենքերի և կառույցների ինժեներական ապահովում:

3. Շինարարական մեխանիկա և ինժեներական հիդրավլիկա:

Գիտաժողովի պատասխանատու քարտուղար, «Նյութերի դիմադրություն» ամբիոնի վարիչ էռնեստ Բելուբեկյանի կարծիքով՝ գիտաժողովի նպատակն է սերտ կապեր հաստատել աշխարհի հայտնի գիտնականների, ճարտարապետական և շինարարական կազմակերպությունների հետ, քննարկել ընդհանուր հետաքրքրություններ ներկայացնող գիտական հարցեր:

Գիտաժողովին ներկայացվող աշխատությունները հրատարակվելու և ամբողջությամբ ամփոփվելու են առանձին ժողովածուի կազմում:

Լ. Լևոնյան

Համալսարանի գիտքարտուղար, տ.գ.թ., դոցենտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ 16-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ



Նոյեմբերի 22-23-ին կայացավ Հայաստանի ճարտարապետների միության 16-րդ երկօրյա համագումարը: Առաջին անգամ այն գումարվել է 1937թ-ին: Իր 70-ամյակը բոլորած Հայաստանի ճարտարապետների միության համագումարի օրակարգը հագեցած էր: Նախ, ճարտարապետներն իրենց մտահոգությունը հայտնեցին մայրաքաղաքի հիմնական դեմքի պահպանման առումով, ըստ նրանց՝ հաճախ պատվիրատուներն են թելադրում կառույցի ոճը, ինչը կարող է աղճատել քաղաքի ընդհանուր տեսքը: Միության անդամներն առաջակեցին մեծ ուշադրություն դարձնել ապագա ճարտարապետների դաստիարակությանը: Կարծիքներ հնչեցին, որ ճարտարապետական ոճը պետք է թելադրի տվյալ քաղաքի պատմական և ճարտարապետական միջավայրը, որի հետ պետք է հաշվի նստել: Համագումարի օրակարգում էր նաև «Հայաստանի ճարտարապետների միություն» ավան մեջ «միություն» բառը «միավորումով» փոխելու առաջարկությունը, որն էլ ընդունվեց:

Ճարտարապետությունը պետության հետ առնչվող արվեստ է, և ճարտարապետների միության գոյությունն ինքնին կարևոր ու անհրաժեշտ փաստ է:

Շնորհավորում ենք բոլոր ճարտարապետներին Հայաստանի ճարտարապետների միության կազմավորման 70-ամյակի կապակցությամբ:

➥ 1 ԳԻՏԽՈՐՀՐԴՈՒՄ



Ճարտարապետության դոկտոր,«Ճարտարապետության տեսության, պատմության և հուշարձանների վերականգնման» ամբիոնի պրոֆեսոր **Արշավիր Թորամանյանին** բազմամյա բեղմնավոր գիտամանկավարժական գործունեության համար գիտխորհրդի որոշմամբ՝ շնորհվել է «ԵՃՇՊՀ պատվավոր ամբիոնի վարիչ»-ի կոչում:




Ճարտարապետության դոկտոր, «Ճարտարապետության տեսության, պատմության և հուշարձանների վերականգնման» ամբիոնի պրոֆեսոր **Գառնիկ Շախկյանին** բազմամյա բեղմնավոր գիտամանկավարժական գործունեության համար գիտխորհրդի որոշմամբ՝ շնորհվել է «ԵՃՇՊՀ պատվավոր պրոֆեսորի»-ի կոչում:

Գիտխորհրդի որոշմամբ՝ հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի օրհներգը (խոսքը և երաժշտությունը տ.գ.դ., պրոֆեսոր Վ. Ի. Գրիգորյանի):

Օրհներգը տպագրված է «Ինժեներ» ամսաթերթի 2006թ. N 1(1) և 2007թ.N 5(7) համարներում:

ՆՈՐ ԳՐՔԵՐ




Լույս է տեսել «Երևանի Գլխավոր Հրապարակը ժամանակի եվ տարածության Մեջ» գիրքը, հեղինակ՝ ճարտարապետության նախագծման և դիզայնի ամբիոնի վարիչ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Գարրի Ռաշիդյան: Գիրքը նվիրված է Երևանի գլխավոր հրապարակի ճարտարապետական միջավայրի կազմավորմանը, որը դիտարկվում է ժամանակի, տարածության և ժամանակակից խնդիրների լուծման պատմական զարգացման գործընթացի մեջ:

Այս գիրքն ինչ-որ չափով ունի նախազգուշացնող, ծրագրային բնույթ: Այն ստիպում է մտածել հրապարակի ճարտարապետական միջավայրի կատարելագործման ուղիների և նոր մոտեցումների հայտնաբերման ուղղությամբ՝ նոր խնդիրների ամբողջության մեջ:



Լույս է տեսել հայ նշանավոր ճարտարապետ Սամվել Սաֆարյանին նվիրված «Ճարտարապետ Սամվել Սաֆարյան» գիրքը, հեղինակներ՝ համալսարանի պրոռեկտոր, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Յուրի Սաֆարյան և ճրտարապետության թեկնածու Հայկ Բարխուդարյան: Գիրքը կենդանի պատկերներով մի պատում է՝ շարադրված ականատես ժամանակակիցների՝ կոլեգաների, ընկերների, մտերիմ մարդկանց ամիջական վկայությունների, տպավորությունների հիման վրա: Կարծում ենք, որ Վարպետի և նրա գործերի մասին պատմող այս գիրքն օգտակար ու հետաքրքիր կլինի ինչպես ճարտարապետների, արվեստագետների, շինարարների այնպես էլ՝ հայկական ճարտարապետության գիտական և ստեղծագործական խնդիրներով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար, նաև՝ կարող է օգտագործվել ուսումնական պրոցեսում:



Նոյեմբերի 16-ին բացվեց Հյուսիսային պողոտան, և իրականություն դարձավ Ալեքսանդր Թամանյանի կողմից կազմված Երևանի նոր հատակագծի պատկերը: Հյուսիսային պողոտան Թամանյանը նախագծել է որպես հետիոտնային փողոց, որը կապում է մայրաքաղաքի երկու վարչական և մշակութային հրապարակները՝ Հանրապետության ու Ազատության:

Մայրաքաղաքի կենտրոնի այս տարածքում կիսանկուղային, հողեղեն տներ էին, նեղ և անհրապույր փողոցներ: ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի նախաձեռնությամբ 1999թ. որոշվեց կյանքի կոչել Հյուսիսային պողոտայի նախագիծը, որի աշխատանքները վստահվեցին ճարտարապետ Նարեկ Սարգսյանի ղեկավարած հեղինակային խմբին: 2002թ. դրվեց պողոտայի կառուցման սկիզբն ազդարարող առաջին քարը և ահա, հինգ տարի անց, Հյուսիսային պողոտան իրականություն է: Կառուցված ընդհանուր մակերեսը 320 հազար քմ է: Ընդհանուր առմամբ կատարվել է 101 մլրդ դրամի ներդրում:


«Հյուսիսային պողոտայի նման ծրագիր մեր տարածաշրջանում որևէ պետություն դեռ չի իրականացրել: Մեզ հաջողվեց օգտագործել և՛ տեղական ներդրումների ներուժը և՛ սփյուռքահայերի և՛ օտարերկրացիների, որոնք հայկական արմատներ չունեն» - ասաց ճարտարապետ Նարեկ Սարգսյանը:

Քաղաքապետ Երվանդ Զախարյանի խոսքով՝ ստեղծվել է միանգամայն ինքնատիպ համալիր: Պողոտան եզրագծող երկու տասնյակից ավել շենքերից յուրաքանչյուրն ունի իր ուրույն ճարտարապետությունը, դրանք նախագծված են առանձին ճարտարապետների կողմից՝ միաժամանակ ներկայացնելով ընդհանուր, հաստատուն դիմագիծ: Պողոտայի հարավային մասը՝ Հանրապետության հրապարակին հարող հատվածի շենքերը, կառուցված են ավանդական ոճավորմամբ, համահունչ հրապարակի միջավայրին:

Որքան էլ հնչեն գովեստի, թե քննադատող խոսքեր, մի բան ակնհայտ է և միանշանակ. Հյուսիսային պողոտայի շինարարությունը հնարավորություն է տվել ժամանակակից քաղաքակիրթ վիճակի բերել մայրաքաղաքի կենտրոնական կարևոր հատվածը:

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՇԱՀԵԼ Է ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ TACIS-TEMPUS JEP-27089 ԾՐԱԳԻՐԸ

Դեկտեմբերի 6-ին համալսարանում կայացավ Շվեդիայի թագավորական և Լոնդոնի արևելյան տեխնիկական համալսարանների պատվիրակությունների հանդիպումը համալսարանի ղեկավարության հետ: Ինչպես նշեց Շվեդիայի թագավորական տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Հանս Մատսոնը, քննարկվեցին TACIS-TEMPUS ծրագիր և անշարժ գույքի փորձաքննություն և կառավարում մասնագիտությամբ ուսուցման որակի հետ կապված հարցեր: Նշվեց, որ համալսարանի մեկ շրջանավարտ ուսումը երկու տարով շարունակելու է Շվեդիայի թագավորական տեխնիկական համալսարանում:



Համալսարանի Էկոնոմիկայի, իրավունքի կառավարման ամբիոնի վարիչ Սարգիս Ստեփանյանի խոսքերով՝ մինչև TACIS-TEMPUS JEP-27089 դրամաշնորհային ծրագրի շահելը բավականին երկար և աշխատատար ճանապարհ ենք անցել: Վեց տարի անընդմեջ մեր ամբիոնի երիտասարդ դասախոսներից մեկ հոգի մասնակցել է Շվեդիայի թագավորական տեխնիկական համալսարանի կազմակերպած մրցույթին՝ ստանալով գիտական մագիստրոսի աստիճան: Հաշվի առնելով այս հանգամանքը և այն, որ այստեղ մեծ ներուժ կա՝ ծնվեց այս ծրագիրը: Ծրագրի բյուջեն կազմում է 284 հազ. եվրո:TACIS-TEMPUS JEP-27089 դրամաշնորհային ծրագիրն իրականացնում է Շվեդիայի թագավորական տեխնիկական համալսարանը: Ծրագրի շրջանակում Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը համագործակցելու է Լոնդոնի արևելյան տեխնիկական համալսարանի, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի հետ, որոնք ծրագրի մասնակից ամդամներն են: Ծրագիրը նախատեսում է անշարժ գույքի գնահատման և կառավարման մասնագետների պատրաստման և վերապատրաստման կուրսեր, որոնց արդյունքում ստեղծվելու է անշարժ գույքի գնահատման և կառավարման կենտրոն՝ հագեցած տեխնիկական հնարավորություններով, Եվրոպայում վերապատրաստում անցած մասնագետներով:

Ս. Ստեփանյան

ՍԻՐՎԱԾ ԵՐԳՉՈՒՀԻՆ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 30-ին Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը հյուրընկալեց ճանաչված երգչուհի Շուշան Պետրոսյանին: Հանդիպումն անցավ մտերիմ և ջերմ մթնոլորտում:



Երգչուհին նշեց, որ շրջել է աշխարհի տարբեր քաղաքներով, բայց Երևանն իր համար ամենագեղեցիկ և ջերմ քաղաքն է, և կցանկանար, որ մայրաքաղաքը, վերակառուցվելով և թարմացվելով հանդերձ, չկորցներ իր դիմագիծը, գույնը և ջերմությունը:

-Այստեղ լուրջ աճելիք ունեն ապագա ճարտարապետները, - ասաց երգչուհին:

Հանդիպման վերջում ուսանողները լուսանկարվեցին սիրված երգչուհու հետ:

3 **Ն Շ Ա Ն Ա Կ Ո Ւ Մ**



Տեղեկատվական տեխնոլոգիաների և արդյունաբերական էլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ Սեր Վարդգեսի Մարկոսյանը ծնվել է 1954թ. հոկտեմբերի 27-ին, Երևանում: 1976թ. ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ էլեկտրոնիկայի հաշվիչ մեքենաներ մասնագիտությամբ: 1981թ. ավարտել է Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանի ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1976-1990թթ. աշխատել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում: 1986թ. նրան շնորհվել է Հայաստանի Լենինյան կոմերիտմիության մրցանակ՝ գիտության և տեխնիկայի բնագավառում: 1990-1992թթ. հանդիսացել է «Լոկոս-Մարվոլ» խորհրդագերմանական համատեղ ձեռնարկության Երևանի ինֆորմացիոն տեխնոլոգիաների կենտրոնի տնօրենը: 1992-ից առ այսօր Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն է: Հեղինակ է շուրջ վեց տասնյակ գիտական աշխատանքների, այդ թվում՝ մեկ մենագրության:

ԼԱՎ Է ՄԵԿ ԱՆԳԱՄ ՏԵՍՆԵԼ, ՔԱՆ ՀԱԶԱՐ ԱՆԳԱՄ ԼՍԵԼ

Առաջին արձագանքը

Միջոցառումը «Ինժեներ» թերթի նախորդ համարում տպագրված՝ համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանի հարցազրույցի առաջին արձագանքն է (խոսքը շինարարական արտադրության հրապարակում իրականացվող գործնական դասընթացների մասին է):



Մենք ապրում ենք զարգացող տեխնոլոգիաների դարում, իսկ ժամանակի հետ համահունչ քայլելու համար պետք է ունենալ գիտելիքների այն նվազագույն շտեմարանը, որը համալրված կլինի ոչ միայն տեսական, այլ նաև՝ գործնական գիտելիքներով:

Այս նկատառումները հաշվի առնելով՝ Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Վարդգես Գրիգորյանը իր հերթական դասաժամերից մեկը նախաձեռնեց անցկացնել «Հորիզոն 95»-ի կողմից Հյուսիսային պողոտայում կառուցվող բնակելի-առևտրահասարակական համալիրի շինարարության հրապարակում:

-Այս առարկայի դասախոսության ժամերը պարբերաբար կանցկացվեն այս եղանակով, քանզի համարում եմ, որ տեսականորեն ուսուցանվածը, առանց գործնական գիտելիքների, այնքան էլ արդյունավետ չէ և ժամանակի ընթացքում հեշտությամբ կարող է մոռացվել, - նշեց Վ. Գրիգորյանը:

ՇՏ 53,54,42 խմբերի ուսանողները հնարավորություն ունեցան իրենց տեսական գիտելիքների կիրառությունը գտնել գործնականում, ծանոթանալ շինհրապարակում տեղակայված սարքավորումների աշխատանքին, ականատես եղան ամրանային, բետոնային, եռակցման, կաղապարային և այլ աշխատանքներին:

ՇՏ42 խմբերի ուսանողուհի **Ն. Գալստյան**

ՏԱՐՎԱ ՆԱԽԱԳԻԾ՝ 2007

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի շենքի նախագիծը



Վճռաբեկ դատարանի շենքը կկառուցվի Երևանի Հանրապետության հրապարակի հարևանությամբ՝ Մելիք Ադամյան և ...փողոցների հարևանությամբ:
Նախագծի հեղինակ՝ ճարտարապետության ֆակուլտետի դեկան՝ **Տիգրան Բարսեղյան**

FA

مهندس

روزنامه «همشهری» تهران در تاریخ ۳ مهر ۱۳۸٦ مقاله ای به چاپ رسانده که ما نیز آنرا با اختصاربرای علاقه مندان تاریخ معماری نوین ایران در این شماره بازتاب می دهیم.

یادگار معماران مسیحی

در هرنقطه از کشور ایران که مسیحیان سکونت دارند دست کم یک بنای تاریخی ارزنده بنا شده است

تهران برخی از بهترین بناهای خود بویژه در ناحیه مرکزی شهر را که هنوز دیدنی ترین ناحیه شهر است،وامدار ایرانیان مسیحی است.

در این ناحیه به غیر از میدان حسن آباد که با آن معماری دلپذیر هنوز از شکیل ترین میدانهای شهر است،چند عمارت زیبای دیگر نیز وجود دارد که عبارتند از ساختمان پست،کاخ دادگستری،کاخ گلستان،بنای وزارت خارجه،بانک سپه،بانک ملی شعبه مرکز،باشگاه افسران،موزه ایران باستان،کاخ مرمر وشاید چند عمارت دیگر. همه این عمارتها به استثنای کاخ گلستان (از کارهای دوره قاجاریه) وموزه ایران باستان که طراح آن آندره گدار بوده است، کار ایرانیان مسیحی است.اگر این مجموعه را از وسط شهر تهران برداریم چیزی جز کوچه پس کوچه های کم ارزش باقی نخواهد ماند.

میدان حسن آباد که بعدها یک ضلعش را بانک ملی خراب کرد،ولی با همان سه ضلع باقی مانده اش یاد آور معماری اروپائی است کار قلیچ باقلیان است (که عمارت شهربانی را هم ساخته است) اما مهندس محاسب آن ،معمار برجسته لئون تادوسیان بوده است.کسی که کاخ مرمررا هم به پایان برد.بر اساس سخنان حسین لرزاده که در گفتگو با مسعود نوربخش نویسنده کتاب«تهران به روایت تاریخ» گفته،داستان کاخ مرمر از این قرار است که نقشه کاخ مرمر را،خود رضا شاه داده بود.اما معمارانی که دست اندر کار ساخت آن بودند خیلی زود از کار اخراج شدند وادامه کار به دست لئون تادوسیان داده شد وبه سرانجام رسید . تادوسیان زاده تهران بود.

عمارت عالی پست خانه را الگال گالستیانس،زاده جلفای اصفهان،ساخته است.بنای این عمارت در سال۱۳۰۷ شمسی به مناقصه گذاشته شد و نیکلای مارکف،معمار گرجی،برنده آن شد،اما ساخت آن به دست گالستیانس انجام گرفت. عباس مسعودی که در سال ۱۳۱۳ شمسی گزارشی از عمارت پستخانه در روزنامه اطلاعات نوشته،الگال گالستیانس را سازنده آن معرفی کرده است. استاد لرزاده نیز روایت کرده است که پست خانه کار الگال گالستیانس است.

ساختمان وزارت خارجه در میدان مشق نیز کار دو تن از معماران مسیحی است.طرح آنرا گابریل گوریکیان داد.کسی که در استانبول زاده شدوهمان سال(۱۹۰۰)خانواده اش از بیم سخت گیریهائی که بر مسیحیان درآن دیار شروع شده بود وبه آوریل ۱۹۱۵ ختم شد،به ایران آمدند.گورکیان بعدها برای ادامه تحصیل به اروپا رفت وپس از بازگشت تنها چهار سال در ایران ماند. اما در آن چهار سال یادگارهایی از خود به جا گذاشت که تا قرنها نام اورا به عنوان یک ایرانی(چنانکه خود میخواست)بر قرار نگه می دارد.طرح ساختمان وزارت خارجه را او داد،وهم میهن دیگرش،الگال گالستیانس ساختنش را بر عهده گرفت.طرح کاخ دادگستری را نیز که ازمهمترین بناهای آن دوره است را گابریل گوریکیان داد.

علاوه بر این از او طرح ساختمان وزارت صنایع را درکنار کاخ گلستان و چند ویلا را که همان اول ورودش به تهران،به او سفارش شده بود داریم .ازجمله ویلاهای پناهی،خسروانی،ملک اصلانی ، نظام مافی و فیروز.

گابریل گوریکیان به همراه دو معمار دیگر از برجسته ترینها در دوره خود بوده اند.آن دوتن دیگر پل آبگار و وارطان هوانسیان نام دارند.

ساختمان مرکزی بانک سپه در میدان توپخانه ومهمان خانه دربند وطرح هتل فردوسی و هنرستان دختران در خیابان سوم اسفند(سرگرد سخایی)وکاخ اختصاصی(شهناز پهلوی)از کارهای هوانسیان (زاده تبریز)وایستگاه رادیوومدرسه ناشنوایان باغچه بان و بسیاری از ادارات دارایی شهرستان ها کار پل آبکار(زاده تهران)هستند. اینان هر یک حدود نیم قرن به ایران خدمت کرده اند،و بناهای ساخت آنان تنها به همین چند مورد محدود نمی شود.

در کنار اینان باید از یک مسیحی نامدار دیگر یاد نیز یاد کنیم .ا وژن آ فتاندیلیانس،زاده تبریز به سال ۱۲۹۲ خورشیدی،که تالار فرهنگ و دبستان فردوسی(اداره آموزش وپرورش کنونی استان تهران)و وزارت فرهنگ وهنر (اکنون وزارت فرهنگ وارشاد اسلامی)،وساختمان اولیه فرودگاه مهر آباد وکلیسای سرکیس مقدس ودبیرستان نوربخش همه از یادگارهای اوست.در بین ساختمانها ی مد رن امروز تهران نیز بنای تالار رودکی،سینماهای متروپل،گلدن سیتی،نیاگارا دیانا وسینما کریستال را مسیحیان ساخته اند. تالار رودکی از بهترین و امروزی ترین بنا های شهر،کار همان اوژن آفتانـــــدیلیانس.

معماران مسیحی نه تنها بناهای مهم شهر تهران که بسیاری از بناهای مهم شهرهای دیگر را هم طراحی کرده وساخته اند،از جمله خیابان امام خمینی تبریز که توسط آودیس اوهانجانیان طراحی شده،معماری زاده ایروان که پس از الحاق ارمنستان به شوروی به ایران آمد.

ذکر این یادگارها در تمام شهرها این گزارش را دراز خواهد کرد اما قلم برای دادن یک نمونه دیگر بی طاقتی می کندوآن شهر قم است،شعبه مرکزی بانک ملی،دانشکده پزشکی، پایانه اتوبوس ها و شاید بناهای دیگر هم حاصل فکر ونقشه مهندس گورگین است که نام اصلی اش گورگن پیچیکیان است معماری متولد ولگاگراد که از هفده سالگی به ایران آمد و تا پایان در ایران زیست و در ایران به مهندس گرگین شهرت داشت.



ENGINEER

EN

BACK TO WORK AND STUDIES AGAIN

Summer holidays passed unfortunately. They left either nice memories to some people or ordinary boring days to some others. Some people enjoyed summer holidays traveling to foreign countries, communicating with various nations and tribes, getting in touch with different cultures and, thus, obtaining deep knowledge about life, humanity, human activity and lifestyle. Meanwhile, some people took great efforts all the summer to pass their exams and did not have time to enjoy their holidays. That is why man should realize what he really needs in this life, what are the sense and aims of his living and what he should do not to waste time in vain. Time takes away everything, the long range of years can change either name or appearance or character or destiny. Time is a river the water of which never goes back; it is the capital of the people who do mental work. Indeed, great is he who can possess his time precisely. The greatest waste that is done by humanity is waste of time. Who does not know the value of time he was not born for glory. Man is an astonishing creature; he grieves when loses his wealth and he is indifferent to the fact that his years are passing without return. Nothing must be delayed to tomorrow; here is the secret of those who understand the value of time.

Nevertheless, everything, either good or bad, must have time limit. Pleasure would be pleasure but you should not forget about your studies and work. Life, just like proverbs, is estimated not by length but by sense. Mind is stronger than fist. You can easily give way to the strength but you can only obey great minds. Where there is brain there is power, too. Man only has one tyrant-ignorance, and there is only one remedy for it- knowledge. The less men know the wider their knowledge seems to them.

Ignorance is fog that hides evil. It has more confidence than knowledge, and only the ignorant can insist that sciences will never be able to solve this or that problem. There is nothing worse on earth than a “hard-working ignorance. Each man who is interested in public disasters can be sure that the majority of disasters are caused by ignorance. There are 3 types of ignorance: to know absolutely nothing, to know badly what everybody knows and to know not the correct things that are really needed.

In contrast to ignorance, progress is not contingency, it is necessity. The only happiness in life is the constant aspiration for progress. Never ignore anything that can make you great, never kill the goose that lays the golden egg. Everybody should strive to know more than his father and grandfather knew. Soul is subject to the same law as body: without constant food it is impossible to live. The boldest man can fear if he does not have firm views. What we know is limited, and what we do not know is unlimited. The whole sense of life is the search for the unknown. But knowledge will never be a finished book. Each important progress brings forth new issues. Each development brings forth greater difficulties. History of civilization can be expressed by 6 words: the more you know the more you can.



Teachers have great part and parcel in developing human skills and minds. Teacher should be experienced enough to prepare students for life. It demands more knowledge to teach others than to learn yourself. To be a good teacher means not only to possess much knowledge but to do more for coming generation than the previous generations have done for us.

However, there is one problem: very often we know more useless than useful things. Do not strive to know everything later not to become ignorant in everything! Wise is he who knows necessary things. Do not be afraid of not knowing anything, be afraid of knowing wrong things! This is the cause of world evil. It is wrong to think that knowing much is a great value. Important is the quality not the quantity since you should put your heart and soul into your studies and work if you want to become a good specialist. Unhappy is he who does not do what he can but undertakes a business about which he has no idea.

Without exclusively strenuous work there are neither talents nor genii. Glory is in the hands of work. The best pleasure is doing things that people think you are not able to do. Human activity is the best interpreter of people’s mind. Man is born to act. Doing nothing and not existing are the same things. Life and activity are so closely tied to each other as light and flame. Any type of work is more pleasant than rest. There is no mountain in the world the top of which has not been gained by hard work. When the machine stops working it becomes rusty. Do not believe people’s words, believe their actions!

So, the essence of my words is to do everything in time later not to regret for not doing this or that thing.

Now, when summer holidays are finished, it is time for work and studies again. Anyhow, whatever you do, wherever you go you ought to know that man cannot have another ambition except the ambition of becoming a “REAL MAN .

Arpineh Nuroyan

FR

INGÉNIEUR

L'UNIVERSITE D'ETAT D'ARCHITECTURE ET DE CONSTRUCTION D'EREVAN A GAGNE LE PROGRAMME DE GRANTS DU CONSEIL EUROPEEN "TACIS-TEMPUS" JEP-27089



D'apres le chef de la chaire de la gestion d'economie et de droit de l'Universite S. Stepanyan, on a eu un chemin assez long et plein de travail avant d'arriver a gagner ce programme de grants. Six ans sans inerrumption l'un des professeurs de notre chaire a participe au concours, ogranise par l'Universite technique royal de la Suede, recevant le grade de ma tre en sciences. Prenant en consideration ce fait, ainsi que le fait qu'il y ait une grande force interne, on a cree le programme. Le budjet du programme est constitue de 284.000. euros. Le programme de grants "TACIS-TEMPUS JEP-27089 est realise par l'Universite technique royale de la Suede. Dans le cadre du programme, L'Universite d'Etat d'architecture et de construction d'Erevan va collaborer avec l'Universite technique de l'est de Londres et la Compagnie a respnsabilite limitee "Projet de Ma tre , qui sont membres participants du programme. Le programme prevoit des cours de formation pour les specialistes en estimation et en gestion du mobilier et, par consequent, on creera un centre d'estimation et de gestion du mobilier, muni de moyens techniques et de specialistes qualifies en Europe.

Le 6 decembre il y a eu une rencontre des delegations de l'Universite royale de la Suede et de l'Universite technique de l'est de Londres avec la direction de l'Universite.

Lors de la rencontre on s'est mis d'accord sur certaines choses, comme le professeur de l'Universite technique royale de la Suede Hans Mattson a note, on a discute des problemes concernant le concours, auquel ont pris part les promus en expertise du mobilier et en gestion. Un promu de l'Universite continuera ses etudes a l'Universite technique royale de la Suede pendant deux ans, dans le cadre du programme.

NOS ETUDIANTS A CHOUCHI

Du 18 au 25 octobre, les etudiants de la faculte d'architecture de l'Universite d'Etat d'Architecture et de Construction d'Erevan ont ete a Chouchi, dans le but de contribuer a la realisation des projets de la fondation "Chouchi renaissance .

La-bas, parmi les monuments historiques et culturels de Chouchi, les etudiants de l'Universite ont realise des travaux de mesurage du College-Seminariat, ainsi qu'ont fait une elaboration de projets pour les travaux d'amenagement de l'eglise Ghazantchetsots, toujours dans le cadre des travaux pratiques de mesurage et de production.

Le professeur S. Petrossyan, chef de la realisation de la premiere etape des travaux cites, a note que ce programme a ete le premier essai de collaboration entre l'Universite d'Etat d'Architecture et de Construction d'Erevan et la fondation "Chouchi renaissance dont le but est d'y faire participer les etudiants de l'Univesite, ainsi que de contribuer aux travaux de reconstruction, realises a Chouchi.

Selon S. Petrossyan, differentes solutions d'amenagement du territoire de l'eglise Ghazantchetsots ont ete elaborees en une journee qui, apres etre generalisees, ont ete remises en discussion.







ИНЖЕНЕР

RU

ЛУЧШЕ ОДИН Р З УВИДЕТЬ, ЧЕМ СТО Р З УСЛЫШ ТЬ

Первый отклик.

Д нное мероприятие – это первый отклик н интервью с ректором ЕГУ С господином Ог несом Токм джяном (речь идет о пр ктических з нятиях н строительной площ дке).

Мы живем в век р звив ющихся технологий, и, для того, чтобы продвиг ться вперед созв чно времени, необходимо иметь, в г ж миним льных зн ний, опир ющихся не только н теоретические, но т кже и н пр ктические зн ния.

Учитыв я вышеизложенное, з вед ющий к федры ,,Технология и орг низ ция строительного производств , д.т.н, профессор В рдгес Григорян, провел один из роков н строительной площ дке, возводимого строительной фирмой "Горизонт 95 , н Северном проспекте, жилого и торгово-общественного комплекс .

- "Лекции по д нном предмет периодически ь д т проводиться подобным обр зом, поскольк я счит ю, что теоретические зн ния не столь прод ктивны и со временем быстро з быв ются , - отметил В. Григорян.

Ст денты гр пп СТ 53, 54, 42 имели возможность применить свои теоретические зн ния н пр ктике. Они озн комились с р ботой технического обор дов ния, н ходящегося н строительной площ дке, прис тствов ли при проведении рм т рных, бетонных, св рочных, оп л бочных и др гих р бот.

Хоч выр зить н дежд , что подобные мероприятия ь д т орг низовыв ться ч ще, поскольк подобные н чин ния очень в жны в деле воспит ния ст дентов-спец листов.



ԲՆԱԳԱՎԱՌԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ՎԱՉԵ ԹՈՔՄԱՋՅԱՆ -80

ՄԱՐԴԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՈՒՍՈՒՑԻՉԸ

Նոյեմբերի 9-ին կլրանար հայրենական հիդրոտեխնիկական գիտության երախտավորներից մեկի՝ Վաչե Թոքմաջյանի 80-ամյակը: Սակայն նա ապրեց ընդամենը 60 տարի…

Ծնվել է 1927թ. նոյեմբերի, 9-ին Լենինականում՝ հայտնի ձուլագործ երեք եղբայրներից կրտսերի՝ Հովհաննեսի ընտանիքում: Վերջինս ոչ միայն ինժեներական, այլեւ հանրագիտարանային գիտելիքների եւ բազմազան հետաքրքրությունների տեր մարդ էր՝ սկսած տեխնիկայից ու բժշկությունից, մինչեւ կերպարվեստ: Հենց նա էր, որ իր անդրանիկ որդուն սեր ներշնչեց դեպի գիրքը, ուսումն ու գիտությունը՝ ցանկանալով իր սիրելի զավակի շնորհիվ իրականացած տեսնել իր չիրականացած իղձերը: Եվ զավակը դպրոցական տարիներին դարձավ բազմաթիվ եւ բազմազան հետաքրքրությունների տեր պատանի, հրապուրվեց արհեստի, արվեստի եւ գիտության տարբեր ճյուղերով, ստեղծեց ձուլածո քանդակներ, տարվեց լուսանկարչությամբ, ֆիզիկայով (հատկապես՝ էլեկտրատեխնիկայով եւ ռադիոտեխնիկայով), ստեղծեց շատ ինքնաշեն սարքեր: Այդ հետաքրքրություններն էին, որ դպրոցն ավարտելուց հետո Վաչեին տարան Երևան, ուր նա միաժամանակ ընդունվեց Պոլիտեխնիկական ինստիտուտ եւ Պետհամալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: Ի վերջո նա ընտրեց պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրոտեխնիկական ֆակուլտետը: Այստեղ Վաչեն անցնում է «պոլիտեխնիկի» ռահվիրաների՝ Վրույր Թորգոմյանի (բարձրագույն մաթեմատիկա), Օգսեն Սապոնջյանի (նյութերի դիմադրություն), Թորգոմ Խաչատրյանի (տեսական մեխանիկա) եւ այլոց դպրոցը, որոնց դասավանդած առարկաներն էլ առանձին ջանասիրությամբ էր յուրացնում: Դրանք դառնում են նրա տեսական գիտելիքների հիմքը: Սակայն ապագա մասնագիտության նկատմամբ սերը հիմնավորապես ամրապնդվում է բնագավառի երկու երախտավորների՝ Վաղարշակ Հովսեփյանի եւ Իվան Եղիազարովի շնորհիվ. առաջինը նրան առաջարկում է հիդրավլիկայի գծով առաջին թեման, իսկ երկրորդը՝ դառնում նրա գիտական ղեկավարը:

Պրակտիկ փորձառության առաջին դասերը նա անցել է դեռ ուսանողական


Հրեշտակների պարը
Գործ՝ Վաչե Թոքմաջյանի, 1941թ.

պրակտիկաների ժամանակ՝ նախ Հայաստանի էներգետիկայի առաջնեկների՝ Սեւանի եւ Գյումուշի ՀԷԿ-երի, ապա՝ միութենական էներգետիկայի հսկայի՝ Սվիրի ՀԷԿ-ի շինարարությանը մասնակցելիս: Տաղանդաշատ ուսանողի անդրանիկ գիտական աշխատանքը վերաբերում էր հողային պատվարների ջրի ֆիլտրացիային, որում նա հանդես է բերում գիտնական-հետազոտողի մեծ ընդունակություններ: Նա առաջարկում է խնդրի սեփական, յուրօրինակ լուծում, ինչի համար արժանանում է կոմերիտմիության կենտկոմի պատվոգրի եւ մեծ գովեստի՝ բնագավառի գիտնականների կողմից:

Վաչեն փայլուն էր սովորում, շատ մարդամոտ էր եւ ընկերասեր: Շատերի հետ է կիսել ինչպես իր գիտելիքները, այնպես էլ՝ հացը, որը հետպատերազմյան տարիներին երբեմն կյանքի կամ առողջության գին ունեին: Այդ սերն ընկերների հանդեպ անշահախնդիր էր, փոխադարձ, եւ նրանցից շատերի հետ ջերմ կապը շարունակվեց մինչեւ կյանքի վերջը:

1950թ. Վաչեն գերազանցությամբ ավարտում է ինստիտուտը եւ ընդունվում ասպիրանտուրա: Միաժամանակ աշխատում է «Գյուղէներգանախագիծ» ինստիտուտում և դասավանդում հիդրոմելիորատիվ տեխնիկումում:

Վաչե Թոքմաջյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանում է 1954 թվականին, իսկ դոկտորականն անավարտ մնաց... Ծանր, երկարատև հիվանդությունը դաժան էր եւ խափանեց նրա շատ ու շատ այլ ծրագրեր եւս...

60-ական թվականների կեսերին Վ. Թոքմաջյանը եւ Ռ. Տոռոյանը համատեղ հեղինակեցին հիդրավլիկայի խնդրագիրքը եւ «Հիդրավլիկական մեքենաներ եւ հիդրոհաղորդակներ» դասագիրքը, որոնք այսօր էլ մեծ դեր ունեն ուսանողների ուսումնառության գործընթացը կազմակերպելու գործում: Նա մշակեց նաեւ բազմաթիվ մեթոդական ձեռնարկներ, նրա մասնակցությամբ նախագծվեցին եւ կառուցվեցին նոր շինություններ:

Թոքմաջյանը լայն հետաքրքրությունների տեր գիտնական էր,այդ շրջանակն ընդգրկում էր հիդրավլիկայի գրեթե բոլոր բաժինները, ինչն իր արտացոլումն է գտել շուրջ 100 գիտական հոդվածներում եւ մենագրություններում: Բնագավառի զարգացման գործում մեծ դեր խաղաց նրա «Ջրհեռ կառուցվածքների հիդրավլիկական հաշվարկը» մենագրությունը: Թոքմաջյանի աշխատություններում ապացույցներն ու եզրահանգումները հիմնված են հզոր մաթեմատիկական հենքի վրա:

Նա մի շարք արտոնագրերի հեղինակ է, այդ թվում եւ իր կնոջ՝ հայտնի սրտաբան Էմմա Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության մեջ օգտագործվող արյան մակարդելիության որոշման սարքի, որի մշակումը, պատրաստումը եւ փորձարկումը նրանք իրականացրին համատեղ: Նա մեծ գիտական կապեր ուներ աշխարհի եւ հատկապես նախկին ԽՍՀՄ հանրապետությունների գիտնականների հետ, անդամ էր դրանցում գործող շատ ընկերությունների եւ խորհուրդների:

Կյանքի վերջին տարիներին ղեկավարեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրավլիկայի ամբիոնը, որոնք եղան նրա լավագույն ստեղծագործական տարիները:

Նա նաեւ մեծ հայրենասեր էր: Երբ սկսվեց արցախյան շարժումը, նա արդեն ծանր հիվանդ էր: Եվ չնայած դրան, նա այդ իրադարձությունների ոգեշունչ ականատեսն էր ու մասնակիցը:

Վաչե Թոքմաջյանը կյանքից հեռացավ 1988թ. հունիսի 2-ի ամառնամուտի մի պայծառ օր, իր երկու թոռնիկների ծնունդից ընդամենը մի քանի օր առաջ, որոնցից մեկը կրելու էր իր, մյուսը՝ կնոջ անունը:

Ռուզան Դավթյան

ԿԵՍԴԱՐՅԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ



Հաճելի անակնկալ էր ծանոթությունը վերջերս լույս տեսած «Ինքս ինձ հետ» գրքի հետ՝ նվիրված անվանի գիտնական – մանկավարժ Վաչե Հովհաննեսի Թոքմաջյանին: Ես ապրեցի մոտ 50-ամյա հեռավորության վերհուշը՝ կապված ուսանողներիս կողմից շատ սիրված այդ ազնվագույն մարդու հետ: Չնայած ոչ ստվար ծավալին՝ գիրքն ունի ճանաչողական-իմացաբանական մեծ արժեք, նրա էջերից իր ողջ կատարելությամբ հառնում է կյանքից անժամանակ հեռացած եզակի անհատականության լուսավոր կերպարը:

Ընթերցելով գիրքը՝ ցավում ես, որ ավելի խորը չեմ ճանաչել այդ մեծ անհատականությանը, չես կարողացել, Շիրազի խոսքերով՝ կեղևից ներս թափանցել, տեսնել մարգարիտը: Գրքի էջերից հառնում է նրա ազնիվ նկարագիրը, նուրբ ու զգայուն էությունը, հոգատար, ուշադիր, անզուգական մարդը, բուռն, բռնկուն ոգին, անհիշաչար, անտրիտուր ընկերը, տաղանդավոր գիտնականն ու մանկավարժը: Պատկերավոր և ռոմանտիկ շնչով է բնութագրում նրան կրտսեր գործընկերը՝ Ալբերտ Մարգարյանը. «Նետվել փոթորկահույզ ծավի ալիքները՝ կործանումից արժեքներ փրկելու, ապա՝ հոգնատանջ մարմինը քարքարոտ ափ հանել և, դեռ լրիվ շունչ չառած, վերստին խորասուզվել փոթորկահույզ ծովը. վաստակաշատ գիտնական Վաչե Թոքմաջյանին շնորհվել էր նման ապրելաձև, իր շրջապատը մաքրելու և ազնվացնելու առաքելություն»: Եվ նա իր այդ առաքելությունը կատարեց մեծագույն նվիրումով, անսահման սիրով, պատասխանատվությամբ:

Յուրաքանչյուր ոք, երևի թե, կուզենար իր հուշերը գրել ճիշտ այնպես, ինչպես գրել է Վաչե Թոքմաջյանը, որի ամենաբնութագրական հատկանիշը բացառիկ անկեղծությունն է, նաև ափսոսանքը՝ «... երազի չափ կարճ ուղու» համար, որ ժամանակ ու միջոց չտվեց լիովին դրսևորվելու, ապրելու արարման բերկրանքը, տեսնելու ոգու հաղթանակը:

Դեռևս պատանի՝ հրապուրվեց ֆիզիկայով: 13 տարեկան էր, երբ պատրաստեց փորձասարքեր, էլեկտրական զանգ, հեռագրական ապարատ, 1 տարի հետո՝ ռադիոյով ղեկավարվող նավ և ավտոմեքենայի մոդել: Նրան վստահում էին ֆիզիկայի լաբորատորիայի բանալին: 1942թ. ֆիզիկայի ուսուցիչը տեղափոխվում է այլ դպրոց. «Ինձ, որպես իր սիրված աշակերտի, տանում է իր հետ»: Պատերազմական ծանր տարիներն իրենց կնիքն են դնում կյանքի և Վաչեի ճակատագրի վրա: Ընտանիքը ծանր կացութ-

Նա Մարդ էր, Հորացիո .....
ՇԵՔՍՊԻՐ

յան մեջ էր. տանը պատրաստում էին գլանակներ, որ գոյատևեն. «Գրապահարանում եղած բոլոր գրքերն օգտագործվում են գլանակների համար»: Առանձնապես ափսոսում է Թ. Թորամանյանի «Հայկական ճարտարապետությունը» և Ստ. Մալխասյանցի «Բացատրական բառարանը»: Այնուհետև սկսում են «ավելի լուրջ գործով զբաղվել»: Տնային վառարանի մեջ հալում են լատունը և, կաղապարների մեջ լցնելով, պատրաստում զանազան իրեր՝ մահճակալի մասեր, արդուկ, բարելիեֆներ: Գրքում ներկայացված է 1941թ. մնացած «Հրեշտակների պարը» հարթաքանդակային բարձրարվեստ հորինվածքի լուսանկարը, որից երևում է Վաչեի արվեստագիտական օժտվածությունը: Դպրոցական ընկերը՝ Արամ Սոլախյանը, գրում է. «Վաչեի նախնիները, ինչպես և հայրը՝ Հովհաննեսը, հորեղբայրներ՝ Արամը և Հայկը ճանաչված ձուլագործներ էին, և երևի թե այդ պատճառով այդ տոհմը այդքան շատ հայտնի նկարիչներ ու քանդակագործներ տվեց»: Ի դեպ, Թոքմաջյան ազգանվան հիմքը կազմող թոքմաջին հենց նշանակում է ձուլող:

Այնուհետև կրթություն՝ դպրոց, երկաթուղային տեխնիկում և ընտրություն՝ Երևանի պետական համալսարան, թե՞ պոլիտեխնիկական ինստիտուտ (երկուսում էլ միաժամանակ ընդունվել էր): «Ես որոշեցի սովորել պոլիտեխնիկական ինստիտուտում ... Արամի և իմ մի քանի լենինականցի ընկերների հետ լինելու համար»: Քիչ է ասել՝ սիրել է մասնագիտությունը. պաշտել է այն, նվիրվել, գերվել: «Ինձ շատ դուր էր գալիս նյութերի դիմադրությունը, ես բոլոր խնդիրները հիշում եմ: Առանձնապես սիրում էի գեոդեզիան: Անգիր գիտեի ամբողջ գիրքը, իմ աշխատանքներից բացի կատարում էի և ուրիշներինը: Դասախոսներից մեծ էր Սապոնջյան Օգսենի հմայքը ... ես լսում էի կլանված՝ առանց զգալու, թե ինչպես է թռչում ժամանակը: Առանձնապես հիանալի էր կարդում Վաղարշակ Հովսեփյանը՝ հիդրավլիկա, որը դարձավ իմ մասնագիտությունը»: Որքան շատ բան են ասում այս սեղմ ու ժլատ տողերն ուսանող Վաչեի և նրա ճանաչողական օժտվածության մասին:

Ուսանողական գիտական ընկերություն, գիտափորձեր, ասպիրանտուրա, միաժամանակ դասավանդում ցածր կուրսերում. դրանք եղան փայլուն դպրոց, նախապատրաստություն թռիչքից առաջ: Բազմաբնույթ, արդիական և գայթակղիչ էին այն թեմաներն ու խնդիրները, որոնցով զբաղվել է Թոքմաջյանն իր գիտական մտքի ճևավորման և կայացման ճանապարհին. հողային պատվարներում ջրի ֆիլտրացիա, փոքր հիդրոկայանների կանոնակարգում, հավասարակշռող աշտարակներ, ճողային շրջահոսեր, գլանային կոորդինատներով դիֆֆերենցիալ հավասարումներ, էներգիայի մարիչ, կլոր թռիչք, հեղուկի շիթի տրածում և այլն՝ դիտելով այն որպես սովորական ընթացք, ուսանողին, ասպիրանտին, դասախոսին հատուկ գործառույթ:

Քաջատեղյակ էր գիտական նորույթներին, ակտիվորեն մասնակցում էր հանրապետական ու միջազգային գիտաժողովներին, սերտ կապերի մեջ էր արտերկրի մեծահամբավ գիտնականների հետ:

➥ 7

ԿԵՍԴԱՐՅԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ

6

Թոքմաջյանի Աստվածն իր մասնագիտությունն էր, ամենահավատավոր Սուրբը՝ Լեոնարդ Էյլերը, որն եղել է նրա կուռքը: Եվ որքան մեծ պետք է լինի այդ պաշտամունքը, որ ընտանիքի հետ Սանկտ Պետերբուրգում գտնվող Թոքմաջյանը 1971թ. առաջինն այցելել էր Էյլերի գերեզմանին:

Թոքմաջյանն աշխատում էր անդադրում՝ երկարատև, ծանր հիվանդության, ֆիզիկական և հոգեբանական ծանրագույն պայմաններում. «Ինձ չի կարելի աշխատել, ինչ որ անում եմ՝ արյան գնով եմ անում», «չեմ կարողանում քնել, երկար ժամանակ մտածում եմ, անկողնում լուծում եմ շարժման դիֆերենցիալ հավասարումները», «սկսում է ծանր նոպա, նոպայի մեջ էլ լուծում եմ երեք կարևորագույն հարցեր», «արթնանում եմ երազում բանաձևեր դուրս բերելիս»... Ինչպիսի հզոր կամք, նպատակին հասնելու վիճռականություն, ճակատագրին դիմակայելու ճգտում, ծանր իրավիճակի սթափ ըմբռնում: «Մեջս երկու հակասական ուժերի պայքար է գնում. մեկը՝ կյանքն է ու առողջությունը, մյուսը՝ աշխատելու ցանկությունն է և կրակը դեպի արարումը»: Բայց մեծ սերը, ստեղծագործելու, իր փայփայած ոլորտում հետք թողնելու բուռն ճգտումը, կամքը, նվիրումը, կարծես թե, լրացուցիչ ուժ, ճակատագրին դիմակայելու լիցք էին հաղորդում նրան:

Ինչ իմանար այդ հզոր անհատը, որ մի ուրիշ ճակատագրական հարված էլ իրեն սպասում: Դա իր պաշտելի տիկնոջ՝ Էմմայի վաղաժամ կորուստն էր, որ հիմնավորապես տակնուվրա արեց գիտնականի մնացած սակավ տարիները և ծրագրերը:

Սիրահարված լինելով տեխնիկական մտքին՝ նուրբ քնարական ընկալում ուներ և գեղագետի ճաշակ: Ինչպիսի հիացմունքով է կարևորում Հրանտ Մաթևոսյանի արվեստի հմայքն ու հեռանկարայնությունը. «Այսօր ռադիոյով մի պատմվածք էին կարդում Ծմակուտ գյուղի մասին... մի աներևակայելի ու չքնաղ գործ է: Գի՞տես թե ինչ գործ է, Էմմա, ինչպիսի խորը փիլիսոփայություն ունի ներառած իր մեջ... Հեղինակը Հրանտ Մաթևոսյանն է... տես թե ինչպիսի հանճարներ են ապրում մեր կողքին, ու մենք դա չենք նկատում...» (չմոռանանք, որ դա 1960-ական թվականների սկզբին էր, երբ Մաթևոսյանը դեռ նոր ճանաչում էր ստանում):

Ընդհանրապես գիտության և մշակույթի ասպարեզում շատ են օրինակները, երբ որևէ բնագավառի զարգացմանը նվիրվել են ոչ միայն առանձին անհատներ, այլև գերդաստաններ՝ սերնդեսերունդ փոխանցելով մասնագիտությունը, արվեստը, ավանդույթները: Այդպես եղել են կերպարվեստի բնագավառում՝ Հովնաթյանները, Բաժբեուկ–Մելիքյանները, ճարտարապետության բնագավառում՝ Պալյանները, Թամանյանները, Սաֆարյանները, ավիացիայում՝ Սիկոյանները և այլն: Դրա լավ օրինակն են նաև հիդրոտեխնիկայի բնագավառում՝ Թոքմաջյանները, որոնց երեք սերնդի ներկայացուցիչ արդեն առկա է:

Նրա սխրալի կյանքն ու գործն ուսանելի են, ուստի նրա կերպարը պետք է ուղեկցի մեզ, օգնի ապրելու, արարելու, դժվարությունները հաղթահարելու:

Գրքի խմբագիր Այդին Մորիկյանի խոսքերով. խելքը բարձրյալի կամքով նրան առատորեն տրված էր , որ նա վաստակել էր, որը մնում է ոչ միայն որպես հուշ, հիշատակագիր, այլ որպես կտակ, դաս, ուղենիշ: Վաչե Թոքմաջյանն ապրեց դժվարին, բայց գեղեցիկ կյանք, գործեց Հրանտ Մաթևոսյանի խոսքերով՝ «փակվող էպոխայի» և «բացվող էպոխայի» յուրօրինակ սահմանագծում, նա փակեց անցյալի էջը և մտավ ներկայից ներս:

Դարերի խորքից է ավանդվել՝ «Բազում են կոչեցյալները, բայց սակավ են ընտրյալները»: Վաչե Թոքմաջյանն այդ սակավ ընտրյալներից է՝ Մեծ քաղաքացի, արժանավորագույն Հայ:

Գ. Շախկյան
Ճարտ. դոկտոր, պրոֆեսոր

ԾՈՎԱԿԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍԱԿՈՎԻ ԿՅԱՆՔԻՑ

ՓՈՔՐԻԿ ԴՐՎԱԳ ՄԵՐ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ

Դրվագը, որի մասին կցանկանայի հաղորդակից դարձնել ընթերցողիս, վերաբերվում է 1960-ական թվականներին:



1943 թվից Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի կազմում գործում էր Ջրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի գիտահետազոտական ինստիտուտը (ներկայիս Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտը): Ինստիտուտում իրականացվող գիտահետազոտական հետաքրքրիր աշխատանքների շարքում ուսումնասիրվում էր նաև Սևանա լճից ջրի գոլորշիացման դեմ պայքարի միջոցառումների մշակմանը նվիրված մի թեմա: Մասնագիտական գրականությունից տեղեկացել էինք, որ Ավստրալիայում ֆերմերներն իրենց տարածքի մի շարք փոքրիկ լճերի վրա լցնում էին որոշակի բաղադրության օրգանական յուղային նյութեր, որոնք մեկ մոլեկուլի հաստությամբ, թաղանթի տեսքով, ծածկում էին լճի մակերեսը և զգալի կրճատում լճի մակերեսից ջրի գոլորշիացումը: Ըստ գրականության տվյալների՝ այդ մոնոմոլեկուլյար թաղանթները չէին խանգարում լճի կենդանական աշխարհի կյանքի նորմալ ընթացքին, ապահովում էին թթվածնային փոխանակությունը ջրում և այլն:

Ինստիտուտում որոշվեց հայթայթել այդ նյութերի նմուշները և փորձել դրանք Սևանի վրա: Մեծ դժվարությամբ այդ նյութերը գտնվեցին և տեղափոխվեցին Երևան: Մշակվեցին հատուկ սարքեր, որոնք պետք է ապահովեին թաղանթանյութի հավասարաչափ բաշխումը ափից, լճի որոշակի ոչ մեծ տարածքի վրա: Բայց հիմնականը, ինչին նվիրված է իմ այս փոքրիկ հիշողությունը, դա այն է, որ փորձնական աշխատանքները Սևանա լճի ավազանում իրականացնելու համար ինստիտուտին անհրաժեշտ էր 4-5 հատ 3-4 տեղանոց սովորական փայտե նավակ՝ կախովի շարժիչներով: Հայաստանի բոլոր հնարավոր կազմակերպությունները, որոնք կարող էին օգնել ինստիտուտին այդ նավակների ձեռքբերման հարցով, անզոր գտնվեցին:

Այդ տարիներին ինստիտուտի տնօրենն էր տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Անանյանը: Նա միաժամանակ իմ գիտական ղեկավարն էր: Անելանելի վիճակից դուրս գալու նպատակով մի օր մտա տնօրենի առանձնասենյակ և առաջարկեցի նավակների խնդիրը լուծելու համար դիմել մեր մեծ հայրենակցին՝ ծովակալ Հովհաննես Իսակովին: Տնօրենը ծիծաղեց, առարկելով, թե՝ ծովակալը բան ու գործ չունի և պետք է զբաղվի մի քանի փոքրիկ նավակների հարցով, այն էլ՝ մի հանրապետության համար, որը ծով չունի:

Հաջորդ օրը ինքս մի նամակ-խնդրանք կազմեցի՝ նկարագրելով նավակների օգտագործման նպատակը և նորից առավոտյան մտա իմ ղեկավարի առանձնասենյակ: Սկզբում զայրացավ, հետո մեղմվեց: Համոզեցի, որ ծովակալը, միևնույն է, իրեն չի ճանաչում, կստացվի՝ լավ, չի ստացվի՝ ի՞նչ անենք ... Նամակը ստորագրվեց և ուղարկվեց Լենինգրադ, ԽՍՀՄ ծովակալություն:

Եվ, օ՜ զարմանք, ուղիղ 9 օր հետո ինստիտուտը ստացավ ծովակալից մի կառավարական հեռագիր այն մասին, որ 58 նավակներն իրենց կախովի շարժիչներով արդեն ճանապարհին էին դեպի Երևան:

Իմ ուրախությանը չափ չկար: Անանյանը զարմացած էր:

Նավակները բարեհաջող տեղ հասան: Պրոֆեսոր Անանյանը ջերմ շնորհակալական նամակ ուղարկեց ծովակալին:

Բայց Սևանի մակերեսից գոլորշիացման կրճատման հարցը այդպես էլ չլուծվեց, քանի որ մշտական քամիները քշում էին լճի մակերեսին փռված մոնոմոլեկուլյար թաղանթանյութը և շպրտում լճափ:

Առարկեցին նաև ձկնարդյունաբերող մասնագետները, քանի որ թաղանթն այնուամենայնիվ կարող էր խախտել թթվածնի կայուն ռեժիմը լճում՝ վնասելով լճի կենդանական աշխարհին:

Դրվագը ես հիշեցի այս օրերին, քանի որ Մեծ Հայրենականի հաղթական ավարտի 60-ամյակի օրերին մեր մայրաքաղաքի՝ Հովհաննես Իսակովի անունը կրող պողոտային կից բացվեց մեր մեծ հայրենակցի հուշարձանը, ինչը եղավ մի նոր արժանի նվեր նրա անմար հիշատակին՝ որպես իսկական հայրենասեր հայի:

է. Ջրբաշյան
տեխ. գիտ. թեկնածու

ԱԿԱՆՋԻԴ ՕՂ ԱՐԱ...

Մարդու առաքինության մասին պետք է դատել ոչ թե ըստ նրա պոռթկումների, այլ՝ ըստ ամենօրյա գործերի:

Պասկալ

Իդեալական գեղեցկությունը և ամենահիանալի արտաքինը ոչինչ չաժե , եթե նրանով ոչ ոք չի հիանում:

Բալզակ

Կյանքը ինքնին՝ ոչ բարիք է, ոչ չարիք, այն թե բարու և թե չարի շտեմարան է, նայած թե դուք ինքներդ ինչի եք վերածել այն:

Մոնտեն

Տարեմուտի թախիծ

ՀԱՄԱՏԱՐԱԾ ՈՒՆԱՅՆԱՓՈՇԻ

Օրերը թռչում են գալարապտույտ,
Կյանքի իմաստը լռում է մեր մեջ,
Այսօրը վաղը անցյալ է դառնում
Եվ ձուլվում անհայտ անմահության մեջ:

ஜ

Օդում լողում է ունայնափոշին,
Մանկուց փորձում ենք մենք դիպչել նրան,
Ինչպես անհայտից ձուլվել ենք մի օր,
Այդպես էլ անհայտ պիտի հեռանանք:

ԵՎ ՈՒՐԻՇ ՈՉԻՆՉ...

Ես կարծում էի՝ այլընտրանքային,
Թվում էր միշտ կա ուրիշ տարբերակ,
Բայց տարբերակը ի ծնե մեկն է ,
Սարդը տեղում է սարդոստայնը՝ փակ:

ᘓ

Աշխարհից գաղտնի մի ձայն անընդհատ,
Հնչում է իբրև գոյության վկա,
Լռության կանչը խենթացնում է ինձ,
Եւ սարդոստայնից փրկություն չկա:

ஜ

Տիեզերական լաբիրինթոսոսում,
Հարցերը հազար՝ զրնգոցը ջինջ,
Մենք մեր հետքերով ետ ենք պտտվում,
Կա մեկ տարբերակ… և ուրիշ ոչինչ:

Անի Տեր-Գուլանյան

Հետաքրքրասերի անկյուն

ՊՐԱՀԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐԾԱՐԱՆԸ

Պրահան հայտնի է իր սրճարաններով, հռչակված պանդոկներով, գինետներով, որոնց մասին լեգենդներ են հյուսվել: Դրանցից շատերը նշանավոր են դարձել որպես վեպերի ու վիպակների գործողությունների վայր: Իսկ «Ոսկե օձի մոտ» կոչվող գողտրիկ սրճարանը նշանավոր է նրանով, որ այստեղ են հաճախել եվրոպական մշակույթի բազմաթիվ ականավոր գործիչներ: Սա Պրահայի առաջին սրճարանն է, որը բացվել է 1707թ.: Սրճարանի հիմնադիրն ու առաջին տերը եղել է Գևորգ Աստվածատրյանը: Ըստ չեխական «Օտտոյի գիտական բառարան» հանրագիտարանի՝ Գ. Աստվածատրյանը ծնվել է Դամասկոսում, 17-րդ դարի երկրորդ կեսին, մահացել Պրահայում՝ մոտավորապես 1740թ.: Նրա հայրը եղել է վաճառական: Մանկության ու պատանեկության տարիներն անցել են Եգիպտոսի Կահիրե և Տրիպոլիս քաղաքներում: Գևորգը, որ տիրապետում էր լատիներենին և իտալերենին, 1699թ. գնում է Հռոմ և ընդունում կաթոլիկություն: 1704թ. մեկնում է Վիեննա: Այստեղ առևտրական մեծ գործ է ձեռնարկում: Բայց շուտով սնանկանում է և վերադառնում Պրահա: Շրջիկ սրճարանները նրա միջոցներն ավելացնում են, և նա գնում է «Ոսկո օձի մոտ» կոչվող շենքի գետնահարկը և բացում վերոհիշյալ առաջին սրճարանը: Պրահայի կենտրոնում հիմնված այս հաստատությունը Գևորգ Աստվածատրյանի ձեռներեցության շնորհիվ դառնում է քաղաքի ամենանշանավոր հավաքատեղին: Սրճարանատերը ճանաչվում է նաև իր աստվածաբանական և բարոյագիտական աշխատություններով: Տեղի հրեաները նրան զրկում են վարկերից, քանի որ նա քննադատական հոդվածներով հանդես է գալիս նրանց դեմ: Սնանկանում է և մահանում աղքատության մեջ: Որպես հիշատակ՝ թողնում է այդ սրճարանը և մի քանի աշխատություններ: Սրճարանի այցելուներն առավելապես ուսանողներ ու երիտասարդ արվեստագետներ էին: Սրճարանի գլխավոր սրահում հուշատախտակի վրա գրված է. «Սա Պրահայի առաջին սրճարանն է, որ 1707թ. բացել է դամասկոսցի հայ վաճառական Իրժի Դեոդատը (Գևորգ Աստվածատրյանը):

Ռ. Դավթյան
[redacted]ագիտ., գիտահիրատ. բաժնի վարիչ՝



«Շուշի վերածնունդ» հիմնադրամի ծրագրերի իրականացմանն օժանդակելու նպատակով Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի ուսանողները հոկտեմբերի18-ից 25-ը գտնվում էին Շուշի քաղաքում: Այստեղ, ուսանողներն իրականացրեցին Շուշի քաղաքի պատմամշակութային հուշարձաններից Ռեալական ուսումնարանի չափագրման, ինչպես նաև Ղազանչեցոց եկեղեցու տարածքի բարեկարգման հայեցակարգի մշակման աշխատանքները:

Վերոհիշյալ աշխատանքների առաջին փուլի իրականացման ղեկավար, դասախոս Ս. Պետրոսյանը նշեց, որ ծրագիրը Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի և «Շուշի վերածնունդ» հիմնադրամի համագործակցության առաջին փորձն էր, որի նպատակն է համալսարանի ուսանողներին մասնակից դարձնել Շուշիում իրականացվող վերականգնողական աշխատանքներին:

«ԻՆԺԵՆԵՐ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԸ

1

ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ

Մեկ տարի է համալսարանի ֆիզկուլտուրայի և սպորտի ամբիոնում ֆիզկուլտուրայի դասերը փոխարինվել են ակումբային պարապմունքներով:

Արդյո՞ք սպորտի զարգացման նոր ուղիների կիրառումն արդյունավետ էր, փորձեցինք պարզել ֆիզկուլտուրայի և սպորտի ամբիոնի վարիչ, միջազգային կարգի սպորտի վարպետ ***Հովհաննես Զանազանյանից****.*



- Այս տարի համոզվեցինք, որ մեծ առաջընթաց էր ակումբային պարապմունքներին անցնելը: Ուսանողը հնարավորություն ունեցավ ընտրել իր սիրած մազածևը ու նվիրվել դրան:

-Ամբիոնի հիմնական ուղղվածությունն է ֆուտբոլը և լողը: Ստեղծվա՞ծ են արդյոք համապատասխան պայմաններ՝ դահլիճ, լողավազան, պարապմունքներն անցկացնելու համար:

- Այս առումով շինարարական քոլեջի միացումը համալսարանին՝ իր հարմար պայմաններով, լայն հնարավորություններ է ստեղծում ֆուտբոլը և ընդհանրապես սպորտն արհեստավարժ հիմքի վրա դնելու համար: Համալսարանի «Ինժեներ» ֆուտբոլային թիմը մեկ տարվա ընթացքում լուրջ հաջողություններ է գրանցել, և քայլեր ենք ձեռնարկում հաջորդ տարի մասնակցել ՀՀ առաջին խմբի առաջնությանը: Ուսանողների հետ պարապում են Սարգիս Հովիվյանը և Արթուր Աբրահամյանը:

- Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Ինժեներ» թիմը մի շարք հանդիպումներ ունեցավ Եղեգնաձորում, Ստեփանակերտում: Ինչպե՞ս անցան հանդիպումները:

- Հոկտեմբերի 23-ին Եղեգնաձորի քաղաքային մարզադաշտում կայացած «Ինժեներ» և «Եղեգնաձոր» թիմերի միջև խաղը անցավ հետաքրքիր, և հաղթեց «Ինժեները»: Ստեփանակերտում հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ հանդիպում «Արցախ» թիմի հետ, ինչն «Ինժեներ»-ի համար լուրջ փորձություն էր: Ինժեներն արձանագրեց առաջին հաջողությունը, սակայն խաղավերջում «Արցախը» հավասարեցրեց հաշիվը, և խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1:1 հաշվով: «Ինժեներ» և «Արցախ» թիմերի միջև հաջորդ խաղը տեղի ունեցավ նոյեմբերի 12-ին՝ Աբովյանի քաղաքային մարզադաշտում: Այս խաղում չնայած որ «Ինժեները» պարտվեց 3:1 հաշվով, դրսևորեց բարձր որակի խաղ և կարգապահություն:

- Օրինաչա՞փ է արդյոք «Ինժեների» հաղթարշավը Երևանի ֆուտզալի 2007-2008թթ. առաջնությունում:

- «Ինժեները» երկու խաղում տարել է երկու հաղթանակ և 6 միավորով վստահորեն գլխավորում է մրցաշարային աղյուսակը: «Ինժեները» խփել է 16 գնդակ, ինչը փայլուն ցուցանիշ է: Կարծում եմ, որ այս հաջողությունը օրինաչափ է և հետագա զարգացման միտում ունի:

Քավարարու՞մ է արդյոք «Ինժեների» վարպետությունը 2008-ին ՀՀ առաջին խմբի առաջնությանը մասնակցելու համար:

- Այժմ կատարվում է մարզիկների ընտրություն՝ առավել արհեստավարժ թիմ կազմելու նպատակով. ես լավատես եմ:

Հուսանք, որ 2008-ին «Ինժեներ»-ին կհաջողվի իրականացնել իր առջև դրված նպատակները:

«ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄԵՐ ՍԱՆԵՐԸ

Մոսկվայի Կրթություն կրթաթոշակային հիմնադրամը սահմանել է «Բարեկամություն» անվանական կրթաթոշակ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 4-րդ կուրսերի գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողների համար:

«Բարեկամություն» անվանական կրթաթոշակի արժանացան նաև մեր սաները:

Դավթյան Կարինե

ՇՏ-43 խումբ, Կենդանակերպի նշանը՝ Առյուծ
Նախասիրությունները՝ համակարգչային նախագծում, դասական երաժշտություն:



Հովումյան Լիլիթ

ՀՔՏ-43 խումբ, Կենդանակերպի նշանը՝ Այծեղջյուր
Նախասիրությունները՝ ընթերցանություն, դասական երաժշտություն:



Գրիգորյան Անի

ԱՔՇ-42 խումբ, Կեղանակերպի նշանը՝ Կշեռք
Նախասիրությունները՝ լեզուների ուսումնասիրում, երաժշտություն, պարզ, ընթերցանություն:



Վաթյան Անի

ՇՏ-44 խումբ, Կենդանակերպի նշանը՝ Խեցգետին
Նախասիրությունները՝ նկարչություն, պար և ընթերցանություն:



Առաքելյան Գրիգոր

ԱՔՇ-41-2 խումբ, Կենդանակերպի նշանը՝ Խեցգետին
Նախասիրությունները՝ նկարչություն, ֆուտբոլ, ընթերցանություն:



Հողե Առնետի ազդեցության ներքո Ի՞նչ է սպասվում 2008-ին

Առնետը չինական Կենդանակերպի առաջին նշանն է, և արևելյան օրացույցով Առնետի տարով է սկսվում տասներկուամյա ցիկլը: Ի՞նչ է իրենից ներկայացնում այդ ցիկլը:

Չինական առասպելը պատմում է, որ Բուդան կյանքի վերջին տարիներին կանչում է իր մոտ քսանութ տարբեր կենդանիների: Բուդային ներկայացան միայն 12-ը առնետը, ցուլը, ճագարը, վիշապը, օձը, ձին, այծը, կապիկը, աքլորը, շունը և խոզը: Նրանցից առաջինը Ուսուցչին ներկայացավ առնետը: Որպես խրախուսանք իր մոտ ներկայանալու համար՝ Բուդան հրամայեց, որ ներկայացած 12 կենդանիներից յուրաքանչյուրը կառավարի մարդու ճակատագիրը մեկ տարվա ընթացքում՝ փոխանցելով իրեն հատուկ բնավորության գծերը: Իսկ առաջնորդի դերը տրվեց Առնետին:

Հնդկաստանում առնետը Գնեշի՝ գիտության աստծո համար երթևեկության միջոց էր: Իսկ ճապոնական առասպելաբանության մեջ այն նաև բարեկեցության խորհրդանիշ է: Ճապոնիայում, հարստության և ընտանեկան օջախի աստված Դայկոկուի արձանիկ պատրաստելիս, նրա ձեռքի պարկի վրա մշտապես առնետին են պատկերում:

Ճապոնիայում, ինչպես և Չինաստանում, առնետների բացակայությունը տանը և բակում տագնապ է առաջացնում: Դա նաև դժբախտություն է նախանշում: Այս կապակցությամբ ընդունված է համապատասխան ասացվածք՝ **«Սուզվող նավից առաջինը առնետներն են փախչում»**:

Արևելքում ասում են նաև, որ եթե լսվում է առնետի կրտկրտոցը, նշանակում է, որ նա փող է հաշվում: Հարավային Չինաստանում առնետին մեծ հարգանքով են վերաբերվում, քանզի նա առաջինը մարդկանց բրինձ բերեց: Այնպես որ գալիք 2008 թվականն այնքան էլ վատը չէ:

Արևելյան աստղագուշակներն ասում են, որ 2008 թվականը ժպտալու է նրանց, ովքեր աշխատասեր են, կարգապահ, բոլոր գործերն անում են հստակ: Եվ, իհարկե, նրանց, ովքեր չեն շռայլում և մտածում են ապագայի մասին: Դրանով Հողի Առնետը տարբերվում է մյուս բոլոր նշաններից: Նա ամուր է կանգնած հողին և ամուր էլ պահում է իր բաժին հողակտորը: Դա նշանակում է, որ Առնետը հաշվենկատ է, հավասարակշռված, չի ընկնում երևակայությունների գիրկը, չարդարացված ռիսկի չի դիմում և բոլոր հարցերում հույսը դնում է միայն իր վրա: Շնորհիվ նպատակասլաց աշխատանքի՝ նա դանդաղ, սակայն անվրեպ կուտակում է իր ունեցվածքը:

Տարվա հովանավոր Առնետին սիրաշահելու համար խորհուրդ է տրվում բնակարանի անկյուններում նրա համար խորհրդանշական հյուրասիրություն թողնել: Լավ կլինի, եթե ձեր տոնական սեղաններին անպայման պանիր և ընկույզ լինեն: Իսկ տոնական հարդարանքում նախապատվությունը տվեք դեղինին և ծիրանագույնին:

Հիմնադիր՝ **Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարան**
(Գրանցման վկայական՝ 03Ա 059500)
Ռեկտոր՝ **Հովհաննես Թոքմաջյան**

Հայոց լեզվի, հայագիտ., գիտահրատ. բաժնի վարիչ՝ **Ռոբերտ Դավթյան**
Գլխավոր խմբագիր՝ **Անի Տեր-Գուլանյան**
Գեղարվեստական խմբագիր՝ **Իզաբելա Բոյաջյան**
Թողարկման պատասխանատու և մակետավորող՝ **Արմենուհի Ալեքսանյան**

Երեւան, Տերյան 105
Հեռ. 54-74-12
«Տպագրության և լրատվության կենտրոն»

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Պատվեր թիվ 48:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 27.12.2007թ.: Տպաքանակը՝ 1000:
Գինը՝ 100 դրամ